ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3

ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 Նոյեմբերի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ասիրյան, Ա. Անանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մինասյան

Օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Գ. Գրիգորյան)

1. Ընդունել ի գիտություն, հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետով նախատեսված (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը) փաստաթղթեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1	«Նարսան» ՍՊԸ
2	«ԱՈԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

2. Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության, Մասնակիցները հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունեն:

Մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում և որակավորման չափանիշներում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել.

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

3. Ընդունել ի գիտություն, որ վերը նշված փաստաթղթերի, գնային առաջարկների պատճենները տրամադրվել է հանձնաժողովի նախագահին:

4. Հանձնաժողովի անդամները որոշեցին գնահատման թերթիկները լրացնել և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց հաստատել գնահատման արդյունքները.

1	«Նարսան» ՍՊԸ	- բավարար
2	«ԱՌԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	- բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

6. Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնաժողովը որոշեց՝

12, 13, 14, 15-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Նարսան» ՍՊԸ-ին:**

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 16, 17-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«ԱՌԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Հաստատել **«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/17»** ծածկագրով ընթացակարգի Պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշման հայտարարության տեքստը .

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. **«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/17»** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունը հաստատելու նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուց հետո հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին, հասցեն՝ ք. Երևան, Բուզանդի 1/4:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ _____ Գ. Գրիգորյան

Անդամներ՝ _____ Ա. Ասիրյան

_____ Ա. Անանյան

Քարտուղար՝ _____ Ա. Մինասյան